



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հասցե : 061 0, ՀՀ, գ. Ջանգակատուն

№ 27

ՈՐՈՇՈՒՄ

17.12.2020թ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ № 10 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգի հետևյալ հարցերը.

1. Ձանգակատուն համայնքի ավագանու No-10 նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Ձանգակատուն համայնքում 2021թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին:
3. Ձանգակատուն համայնքի ղեկավարի վարձատրության չափը, Ձանգակատան համայնքապետարանի և «Ձանգակատուն համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակազմերի 2021թ. աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:
4. Ձանգակատուն համայնքի 2021թ. վարչական բյուջեն հաստատելու մասին:
5. Ձանգակատուն համայնքի 2020թ. վարչական բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
6. ՀՀ Արարատի մարզի Ձանգակատուն համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման հաստատելու և քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններ կատարելու մասին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՍՆԵՐ, ԿՈՂՄ՝

[Signature]
/ստորագրություն/

Հ.Գրիգորյան

[Signature]
/ստորագրություն/

Ա.Սարգսյան

[Signature]
/ստորագրություն/

Ա.Մայիլյան

[Signature]
/ստորագրություն/

Խ.Գևորգյան

Դեմ չկա, ձեռնպահ չկա



Կ.Տ. ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

[Signature]

Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հասցե : 061 0, ԲԲ, գ. Զանգակատուն

ՈՐՈՇՈՒՄ

№ 28 Ե

17.12.2020թ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ և 19-րդ կետերի պահանջներով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով, ավագանին


ՈՐՈՇՈՒՄ Է՝

Սահմանել Զանգակատուն համայնքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի


ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ, ԿՈՂՄ՝


/ստորագրություն/


Հ. Գրիգորյան


/ստորագրություն/

Ա. Սարգսյան


/ստորագրություն/

Ա. Մայիլյան


/ստորագրություն/


Խ. Գևորգյան

Դեմ չկա, ձեռնպահ չկա



ԿՏ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝


(ստորագրություն)

Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

1. Ձանգակատուն համայնքի տարածքում 2021թ.-ի համար տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը

1) Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման), (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

Հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 4500 /չորս հազար հինգ հարյուր / դրամ:

բ/ սույն կետի „ա/„ ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 9.000 /ինը հազար/ դրամ:

- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15.000 /տասնհինգ հազար/ դրամ:

- 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15.000 /տասնհինգ հազար/ դրամ:

- 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30.000 /երեսուն հազար/ դրամ:

գ/ ոչ հիմնական շենքերի շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 900 /իննը հարյուր/ դրամ:

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) Չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 900 /իննը հարյուր/ դրամ:

